

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 40-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 37-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսության մեծ դահլիճում կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված պետական մեծ տոնի՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին։

Մեծ Հոկտեմբերի 40-ամյակին նվիրված հանդիսության նախագահում էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը։

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

Հանդիսավոր նիստում զեկուցեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի պատմական նշանակության և ազգերի ինքնորոշման իրավունքի և այդ թվում հայ ժողովրդի ազգային ինքնորոշման մասին՝ Հոգևոր Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս, դոցենտ Համո Հարությունյանը։

Հանդիսության ընթացքում կատարվեցին արտասանություններ, խմբերգեր և մեներգեր՝ նվիրված Մեծ Հոկտեմբերին։

Մեծ Հոկտեմբերի 40-ամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և օրհնությամբ։

***

Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 6-ին, կառավարական հրավերով Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան շքանշանակիր օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնում Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Ասողիկ, Տ. Հայրիկ և գավազանակիր Տ. Մեսրոպ վարդապետները։

***

Նոյեմբերի 7-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, կառավարական հրավերով, Վեհափառ Հայրապետը Երևանում, Լենինի անվան հրապարակում, ներկա եղավ մեծ Հոկտեմբերի 40-ամյակի առթիվ Երևանի աշխատավորության հանդիսավոր շքերթին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազար-

յանը, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

***

Նոյեմբերի 7-ին, երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրավերով, Երևանում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի շենքում, ներկա եղավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ տրված պաշտոնական ճաշկերույթին։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

***

Նոյեմբերի 29-ին, առավոտյան ժամը 11-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հանդիսավոր մաղթանք Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ։

Երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձին։

Օրվա մեծ տոնի նշանակության մասին զեկուցեց Հոգևոր Ճեմարանի դասախոս դոցենտ Համո Հարությունյանը։

Հանդիսավոր նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։